Արձանագրություն N 6

**ՍԳԻ-16/7-ՇՀԱՊՁԲ-15/15** ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

03 օգոստոսի 2016թ.
ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Լ.Բուդաղյան

Հանձնաժողովի անդամներ՝ Մ.Աղաբաբովա, Ա.Եղիազարյան, Ռ.Մանուկյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Սարգսյան

**1 .Բանակցությունների կազմակերպման մասին**
(*Լ.Բուդաղյան*)

Ընդունել ի գիտություն քանի որ 13-րդ և 20-րդ չափաբաժինների համար հայտեր ներկայացրած և բավարար գնահատված կազմակերպությունների գնային առաջարկները գերազանցում են գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները, ուստի հանձնաժողովը որոշեց.

ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 44-րդ կետի 5-րդ մասի համաձայն առաջին տեղը զբաղեցնող կազմակերպությանը որոշելու նպատակով կասեցնել հայտերի բացման նիստը և առաջարկված գնի նվազեցման նպատակով, բավարար գնահատված կազմակերպությունների հետ բանակցություններ վարելու նպատակով նիստ հրավիրել ս.թ. օգոստոսի 03-ին ժամը 10:00-ին, «Սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի շենք, հասցե՝ ք.Երևան, Պ.Սևակ 5, 1-ին հարկ, տնօրենի ընդունարան հասցեով, բանակցությունների վարման համար ժամանակ սահմանել 15 րոպե:

Սահմանված ժամկետում բանակցություններին մասնակիցների կողմից նոր գնային առաջարկներ չեն ներկայացվել:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ՝ 0***

**2.Ընթացակարգի գնային առաջարկների մասին**
(*Լ.Բուդաղյան*)

Մասնակիցների կողմից առաջարկած պայմանագրի կատարման գները հետևյալն են

ՀՀ դրամ

| Առանց ԱԱՀ | | | | | | | | | | Ներառյալ բոլոր հարկերը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Չ/Հ | Չափաբաժնի անվանումը | «ԷՄԴԻ ընդ Դի Ըլայենս» ՍՊԸ | «Մագտոնի» ՍՊԸ | «ՎԻՌԼԱ» ՍՊԸ | «ԼԵՅԿՈԱԼԵՔՍ» ՍՊԸ | «ԼԻՆԱՐԵ» ՍՊԸ | «Խաչպար» ՍՊԸ | «ՌՈՄԱ» ՍՊԸ | «Դելտա» ՍՊԸ | ապրանքների նախահաշվային գներ |
| 1. | Սուլֆասալիցիլայինթթու | | | | | | | | | 25000 |
| 2. | Քացախաթթու | | | | | | | | | 1500 |
| 3. | Ազոտականթթու | | | | | | | | | 2000 |
| 4. | NaCL | | | | | | | | | 1000 |
| 5. | Գլյուկոզա | | | 48000 | | 115920 | | | 60000 | 50000 |
| 6. | Խոլեստերին | | | 90000 | | 143460 | | | 99000 | 180000 |
| 7. | Խոլեստերին HDL | | | 160000 | | 763200 | | | 72000 | 78000 |
| 8. | Տրիգլիցերիդ | | | | | 115920 | | | 192000 | 136000 |
| 9. | Կրեատին | | | 50400 | | 34670 | | | 57600 | 60000 |
| 10. | Կալցիում Ca | | | 49600 | | 38640 | | | 67200 | 64000 |
| 11. | Մագնիում Mg | | | | | 36720 | | | 32800 | 36000 |
| 12. | Քլորիդ CL 2 | | | | | 14500 | | | | 18000 |
| 13. | Թիմոլի թեսթ | | | | | 134000 | | | | 59200 |
| 14. | Միզաթթու 200մլ x1 | | | 48300 | | | | | 230400 | 64000 |
| 15. | ԿՖԿ CK-HAC ֆերմենտային | | | 94000 | | | | | 132000 | 240000 |
| 16. | ԱՍՏ ֆերմենտային | | | | | 22500 | | | 54000 | 27000 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 17. | ԱԼՏ ֆերմենտային | | | | | 26820 | | | 54000 | 27000 |
| 18. | Հիմնային ֆոսֆատազա | | | 9400 | | 7740 | | | 26000 | 17000 |
| 19. | PEGպոլիեթիլենգլիկոլ 6000 | | | | | | | | | 62500 |
| 20. | ANCA հականեյտրոֆիլ. ցիտոպլազմատիկ հակամարմիններ | 184167 | | | | | | | | 160800 |
| 21. | ACA կարդիոլիդին հակամարմիններ | 79667 | | | | | | | | 110000 |
| 22. | Բուռա/Na2B407/ | | | | | | | | | 1000 |
| 23. | NaOH | | | | | | | | | 400 |
| 24. | Սուրֆանիոս խտանյութ 1լ | | 204000 | | | | 94500 | | | 285000 |
| 25. | Անիոսժել85ՆՊՍ | | 282000 | 66000 | 66000 | | 69000 | | | 510000 |
| 26. | Գերզգայուն C-ռեակտիվ սպիտակուց CRP-HS/highly sensitive/ | | | | | | | 63000 | 199000 | 68000 |

*Ընդունել ի գիտություն, որ «ՌՈՄԱ» ՍՊԸ-ի կողմից հայտով առաջարկվող 26-րդ, «Խաչ պար» ՍՊԸ-ի կողմից հայտով առաջարկվող 24, 25-րդ, «ԼԻՆԱՐԵ» ՍՊԸ-ի կողմից հայտով առաջարկվող 5-13, 16-18-րդ , «Դելտա» ՍՊԸ-ի կողմից հայտով առաջարկվող 5, 6, 8, 10, 13, 16, 17, «Լեյկոպլեքս» ՍՊԸ -ի կողմից հայտով առաջարկվող 25-րդ չափաբաժիններում նշված ապրանքները հանդիսանում են Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանք:*

***Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ – 0:***

**3. Չկայացած չափաբաժինները հայտարարելու մասին**

(*Լ.Բուդաղյան*)

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն` 13 և 20-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած` պայմանագիր չի կնքվում և <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն` 1-4, 19, 22, 23 -րդ չափաբաժինները հայտարարել չկայացած` ոչ մի հայտ չի ներկայացվել:

***Ընդունվել է որոշում կողմ 4, դեմ 0***

**4. Գնահատման մասին**

(*Լ.Բուդաղյան*)

Առաջին տեղ զբաղեցնող մասնակիցներին որոշելու համար կիրառված չափանիշ հայտ ներկայացրած և բավարար գնահատված մասնակիցներից` նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Առաջարկված հայտի հիման վրա հանձնաժողովը որոշեց.

| Հ/Հ | Մասնակիցները | Չափաբաժինները |
|---|---|---|
| ***առաջին տեղ զբաղեցնող ճանաչել`*** | | |
| 1. | «ՎԻՈԼԱ» ՍՊԸ | 5, 14, 15 |
| 2. | «Դելտա» ՍՊԸ | 6, 7, 11 |
| 3. | «ԼԻՆԱՐԵ» ՍՊԸ | 8, 9, 10, 12, 16, 17, 18 |
| 4. | «ԷՄԴԻ ընդ Դի Ըլայենս» ՍՊԸ | 21 |
| 5. | «Խաչպար» ՍՊԸ | 24 |
| 6. | «ԼԵՅԿՈԱԼԵՔՍ» ՍՊԸ | 25 |
| 7. | «ՌՈՄԱ» ՍՊԸ | 26 |
| ***երկրորդ տեղ զբաղեցնող ճանաչել`*** | | |
| 1. | «ՎԻՈԼԱ» ՍՊԸ | 6, 9, 10 |
| 2. | «Դելտա» ՍՊԸ | 15 |
| 3. | «Մագտոնի» ՍՊԸ | 24 |
| 4. | «Խաչպար» ՍՊԸ | 25 |

***Ընդունվել է որոշում կողմ 4, դեմ 0:***

**5.Հարցում կատարելու մասին**

(*Լ.Բուդաղյան*)

ՍԳԻ-16/7-ԾՀԱՊՁԲ-15/15 ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի 7.5-րդ կետի 1-ին մասի համաձայն` Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնել հարցում առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների` Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերի 2.3 կետի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ` ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը, ընդ որում նշված հարցումն ուղարկվում է Ashkhen_Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին հրավերի 7-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան` էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով Lusine_Ghahramanyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին:

***Ընդունվել է որոշում կողմ -4, դեմ – 0:***

**6. Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունների) ներկայացման մասին**

(*Լ.Բուդաղյան*)

Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

*Ընդունվել է որոշում կողմ-4, դեմ – 0:*

**7.Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին**

(*Լ.Բուդաղյան*)

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՍԳԻ-16/7-ՇՀԱՊՁԲ-15/15 ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու գնահատման արդյունքների ամփոփման օրը, սակայն ոչ ուշ քան 15.08.2016թ., «Սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի շենք, հասցե` ք.Երևան, Պ.Սևակ 5, 1-ին հարկ, տնօրենի ընդունարան հասցեով:

*Ընդունվել է որոշում կողմ-4, դեմ – 0:*

Հանձնաժողովի նախագահ — Լ.Բուդաղյան

Անդամներ՝ — Ժ.Հ.Ներսիսյան

Ռ.Մանուկյան

Ա.Եղիազարյան

Քարտուղար՝ — Ա.Սարգսյան